


Анна АРЕВШАТЯН, Григор Магистрос - гимнограф и эстетик, научный редактор – доктор искусствоведения Л.О. Акопян (Москва), Ереван, издательство «Гитутюн» НАН РА, 2018, 130 с.*

Քանալի բաներ – Գրիգոր Մագիստրոս Պաիլավունի, շարականագիր և գեղագետ, հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտություն, Անիի թագավորություն, Բյուզանդական կայսրություն, «Մեկնութիւն քերականին», «Թղթեր»:



X-XI դդ. հայ ակնառու քաղաքական և ռազմական գործիչ, գիտնական, փիլիսոփա, գեղագետ, բանաստեղծ-երաժիշտ և մանկավարժ Գրիգոր Մագիստրոս Պաիլավունին Անիի Բագրատունյաց թագավորության գիտական ու մշակութային կյանքի կենտրոնական դեմքերից է: Պատահական չէ, որ այս գործչի գրական ժառանգությունը գտնվել է բազմաթիվ գիտնականների ուսումնասիրության առանցքում՝ սկսած XIX դարի երկրորդ կեսից (Վ. Լանգլուա, Կ. Կոստանյանց, Ն. Ադոնց, Մ. Աբեղյան, Ա. Ադամյան, Ս. Արևշատյան, Լ. Խաչերյան, Հ. Բարթիկյան, Ն. Թահմիզյան, Գ. Մուրադյան, Կ. Մաթևոսյան, Ա. Արևշատյան և այլք):

Գրիգոր Մագիստրոսի հիմներգական ժառանգության և նրա երաժշտական գեղագիտության հարցերի հետևողական հետազոտությամբ զբաղվել է արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Արևշատյանը՝ տարբեր տարիներին հրատարակված մի շարք հոդվածներում և ուսումնասիրություններում: 2018 թ. ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունում լույս ընծայվեց հեղինակի «Григор Магистрос – гимнограф и эстетик» մենագրությունը, որը Ա. Արևշատյանի՝ նշված թեմային նվիրված բազմամյա հետազոտական գործունեության ընդհանրացումն է: Գրքի գիտական խմբագիրն է արվեստագիտության դոկտոր Լևոն Հակոբյանը (Մոսկվա):

Սույն մենագրությունը հեղինակի՝ 2015 թ. հրատարակված աշխատության վերամշակված և ընդլայնված տարբերակն է¹:

Գրքի նախաբանում Ա. Արևշատյանն անդրադառնում է Անիի թագավորության գիտական ու մշակութային հզոր վերելքի դրսևորումներին տարբեր բնագավառներում (ճարտարապետություն, գրականություն, ձեռագրա-

* Ընդունվել է տպագրության 04.12.2020:

¹ **Արևշատյան Ա.**, Գրիգոր Մագիստրոսը շարականագիր և գեղագետ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015: Տե՛ս նաև Գ. Ամիրադյան, Աննա Արևշատյան, Գրիգոր Մագիստրոսը շարականագիր և գեղագետ (գրախոսական), «Պատմաբանասիրական հանդես», 2015, № 3, էջ 295-299:

կան արվեստ, հոգևոր մասնագիտացված երգարվեստ՝ իր տեսական ու գործնական ճյուղերով և այլն): Հեղինակն ընդգծում է, որ հայկական թագավորության մշակութային կյանքի զարգացումները մեծապես պայմանավորված էին Բյուզանդական կայսրության հետ ունեցած՝ երբեմն բարդ, սակայն, դրանով հանդերձ, սերտ և համակողմանի փոխառնչությունների հանգամանքով: Ներածականն ամբողջացնում են հեղինակի անդրադարձը Գրիգոր Մագիստրոս Պահլավունու հիմներգական ժառանգությանը, ինչպես նաև Մագիստրոսի կերպարի և գործունեության դիտարկումը՝ հայ-բյուզանդական փոխառնչությունների համատեքստում. այդ տեսանկյունից նա համադրվում է XI-XII դդ. բյուզանդական նշանավոր քաղաքական գործիչ, պատմագիր, փիլիսոփա, հանրագիտակ գիտնական Միքայել Փսելլոսի, ինչպես նաև՝ իսլամական աշխարհի խոշորագույն գիտնական Իբն-Սինայի հետ:

Մենագրության առաջին գլխում («Жизнь и деятельность Григора Магистроса») ներկայացված են Գրիգոր Մագիստրոսի կենսագրական տվյալները և նրա բազմակողմանի գործունեության տարբեր ասպարեզների (փիլիսոփայություն, բժշկագիտություն, քերականություն, մանկավարժություն, գրականություն, քաղաքականություն, երաժշտաբանաստեղծական արվեստ) նկարագիրը: Պատմագրական, գրականագիտական և հարակից այլ աղբյուրների հարուստ ներգրավմամբ առանձնացող շարադրանքը վերստեղծում է Պահլավունիների նշանավոր իշխանական տոհմից սերող այս բացառիկ մտավորականի, Ա. Արևշատյանի բնորոշմամբ՝ իր «ժամանակի ամենակրթված մարդկանցից մեկի» վառ կերպարը: Գրիգոր Մագիստրոսին նվիրված մենագրության՝ 2015 թ. հայերեն հրատարակության համեմատությամբ սույն գլուխը պարունակում է կենսագրական որոշ տվյալների ճշգրտումներ և լրացումներ: Զգալիորեն համալրված է Գրիգոր Մագիստրոսի բժշկագիտական գործունեությանը նվիրված ենթաբաժինը, որտեղ Ա. Արևշատյանն անդրադառնում է բյուզանդական բժիշկ Կյուրակոսի հետ Գրիգոր Մագիստրոսի՝ մի քանի տարի տևած նամակագրական գիտական բանավեճին: Այդ բանավեճը, ինչպես նաև Մագիստրոսի այլ նամակներն, ըստ Ա. Արևշատյանի (այստեղ նա ներգրավել է նաև Լ. Հովհաննիսյանի և Ս. Վարդանյանի ուսումնասիրությունները), հիմք են տալիս ենթադրելու, որ բժշկագիտության ոլորտում փայլուն տեսական գիտելիքներ ունենալուց բացի՝ Գրիգոր Մագիստրոսը տիրապետել է նաև գործնական բժշկությանը: Մենագրության քննվող գլխի համալրումներից է նաև Գրիգոր Մագիստրոսի մտերիմ նամակագիրներից մեկին՝ Դանիել Երաժշտին վերագրվող «Դասապետն հրեշտակաց» Ակ պարականոն շարականի չպահպանված երաժշտական բաղադրիչի վերականգնումը (ռեկոնստրուկցիան), որն իրագործել է Լևոն Հակոբյանը՝ ըստ տվյալ շարականի խազագիր տարբերակի (Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 2092 ձեռագիր, XIII դ.): Ըստ այդմ՝ թեև վերականգնումը վերարտադրում է մեղեդու սոսկ ընդհանուր ուրվագիծը, այդուհանդերձ, այն հիմնականում մոտ է կանոնական Շարակնոցի Ակ ձայնեղանակի այն նմուշներին, որոնք հնարավորինս պահպանել են նախնական նկարագիրը:

Աշխատության երկրորդ գլուխը («Григоря Магистрос – гимнограф») նվիրված է Գրիգոր Մագիստրոսի երաժշտաբանաստեղծական ժառանգությանը, որն, ըստ Ա. Արևշատյանի, ներառում է նվագագույնը յոթ նմուշ՝ հինգ շարական և երկու տաղ (վերջիններիս երաժշտական բաղադրիչը չի պահպանվել): Մանրագին հետազոտության արդյունքում հեղինակը ճշգրտում է հաջի վերացման Ե օրվա «Ձորս ըստ պատկերի Քում» Գձ Ողորմյա շարականի պատկանելությունը Գրիգոր Մագիստրոսին, որը հայ շարականագիտության որոշ ներկայացուցիչների կողմից վերագրվել է VII դարի իշխան Աշոտ Պատրիկ Բագրատունուն: Հիմնվելով նախկինում անուշադրության մատնված ձեռագրական մի շարք տվյալների վրա՝ Ա. Արևշատյանը Գրիգոր Մագիստրոսի շարականերգական ժառանգությանն է դասում նաև վերոնշյալ կարգի մյուս բաղկացուցիչները (Հարց, Մեծացուսցե, Տեր հերկնից)՝ բացառությամբ «Ուրախ լեր սուրբ եկեղեցի» Օրհնության շարականի, որը շարականագիրների միջնադարյան ցուցակները ընծայում են VII-VIII դարերի կաթողիկոս Սահակ Ձորափորեցուն: Մագիստրոսի շարականների քննության արդյունքում Արևշատյանը եզրակացնում է, որ դրանց հեղինակը լավագույնս տեղյակ է եղել հայ շարականերգության նախորդող շրջանների ավանդույթներին, ինչպես նաև փայլուն կերպով տիրապետել է եկեղեցական երգարվեստի տաղաչափական հնարներին, հոգևոր երաժշտության տեսական ու գործնական ոլորտներին:

Գրքի երրորդ գլխում («Вопросы музыки в «Толковании грамматики» Григоря Магистроса») հեղինակը քննության է առնում երաժշտական արվեստի տարբեր դրսևորումների վերաբերյալ Գրիգոր Մագիստրոսի դատողությունները, մեկնաբանություններն ու գնահատականները, որոնք ամփոփված են նրա «Մեկնութիւն քերականին» աշխատության մեջ: Ինչպես նշում է Ա. Արևշատյանը, այս երկում, ամփոփելով Դիոնիսոս Թրակացու «Արուեստ քերականին» աշխատության՝ նախորդ դարերի հեղինակների (Անանուն, Դավիթ Փիլիսոփա, Մովսես Քերթոզ, Ստեփանոս Սյունեցի) մեկնությունները, Գրիգոր Մագիստրոսը լրացրել է դրանք սեփական ուշագրավ դատողություններով ու վերլուծություններով:

Գրիգոր Մագիստրոսի դիտարկման առանցքում գտնվող երաժշտաբանաստեղծական ժանրերի շրջանակը բավական լայն է և ներառում է միջնադարյան աշխարհիկ ժողովրդապրոֆեսիոնալ (գուսանական) արվեստի մի շարք կարևոր տարատեսակներ, որոնց թվում են հագներգությունը, ներբողը, տաղը, ողբը, գովասանությունը և այլն: Մագիստրոսը հատկապես հանգամանորեն է անդրադարձել հագներգությանը (ռապսոդիային)՝ ընդգծելով նրա նշանակությունը որպես գուսանական արվեստի առաջատար ժանրի և խիստ արժեքավոր տեղեկություններ է հաղորդել վերջինիս կառուցվածքային, ոճական առանձնահատկությունների և կատարման կերպի մասին: Հեղինակի կարծիքով՝ Մագիստրոսի նման հետաքրքրությունն այդ ժանրով վկայում է տվյալ ժամանակաշրջանի Հայաստանում գուսանական արվեստի զարգացման բարձր աստիճանի մասին: 2015 թ. հայերեն հրատարակության համեմատությամբ քննվող գլուխը ևս ներառում է էական լրացումներ, որոնք առավել ընդգրկում և ամբողջական պատկերացում են տալիս Գրիգոր Մա-

գիստրոսի դիտարկած երաժշտաբանաստեղծական ժանրերի մասին, ինչպես նաև բացահայտում են տվյալ դարաշրջանի գիտակրթական կյանքի որոշ ուշագրավ իրողությունները (ինչպես, օրինակ, արվեստում և գիտության մեջ արաբների ներգրավվածության փաստի արժևորումը Մագիստրոսի կողմից, տե՛ս էջ 71-73):

Աշխատության եզրափակիչ՝ չորրորդ գլուխը («Эстетические воззрения Григора Магистроса. «Послания»») ներկայացնում է Գրիգոր Մագիստրոսի գեղագիտական հայացքները, որոնք շարադրված են նրա «Թղթերում» (նամակներում): Սա կարևոր ներդրում է Մագիստրոսի գեղագիտական հայացքների ուսումնասիրության բնագավառում՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ այս ականավոր գործչի մասին մինչ այժմ ստեղծված հետազոտություններում նրա գեղագիտական մոտեցումներին առանձին անդրադարձ չի արվել:

Գրիգոր Մագիստրոսի ընդգրկուն նամակագրական ժառանգությունը լավագույնս արտացոլում է հանրագիտակ մտածողի քաջատեղյակությունն իր դարաշրջանի գիտության տարբեր ոլորտներին և նրա գեղագիտական մոտեցումները գեղարվեստական կյանքի տարբեր երևույթների հանդեպ: Մագիստրոսի նամակների հասցեատերերի շարքում են տվյալ ժամանակի ինչպես հայ, այնպես էլ օտարազգի քաղաքական և եկեղեցական աչքի ընկնող գործիչները, երաժիշտները, նրա նախկին սաները, հայկական տարբեր վանական միաբանությունների ներկայացուցիչները և այլք: Ա. Արևշատյանը Գրիգոր Մագիստրոսի գեղագիտական աշխարհայացքի կայացման հիմնական ակունքներից է համարում Պլատոնի, Արիստոտելի, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու, Նեմեսիոս Էմեսացու և Դավիթ Անհաղթի աշխատությունները: Հարուստ և բազմաբովանդակ է Մագիստրոսի թղթերում քննարկվող հարցերի շրջանակը. անդրադարձ տվյալ ժամանակի երաժշտական կյանքի ու կենցաղի տարբեր իրողություններին (սովորույթներ, պալատական ծեսերի առանձնահատկություններ), հղումներ հին հունական և հայկական առասպելներին՝ երաժշտական էթոսի և միմեզիսի անտիկ ուսմունքի հետ առնչվող՝ գեղագիտական բնույթի օրինակներ տրամադրելու նպատակով, արժեքավոր դիտարկումներ տվյալ շրջանի հայկական խոշոր գիտակրթական կենտրոններում տիրող բարձր հոգևոր մթնոլորտի և ուսումնական ծրագրերի վերաբերյալ և այլն: Մենագրության՝ 2015 թ. հայերեն հրատարակության համեմատությամբ քննվող գլխում լրացումները թերևս գերակշիռ մաս են կազմում: Հեղինակն ընդլայնել է Գրիգոր Մագիստրոսի նամակներից արված մեջբերումների քանակը, առավել հանգամանորեն վերաշարադրել առանձին մեջբերումների վերլուծական բաժինները, հավելել Մագիստրոսի այս կամ այն դատողության պատմական-հասարակական համատեքստը պարզաբանող հատվածներ:

Հարկ է ընդգծել, որ աշխատության թե՛ երրորդ, թե՛ չորրորդ գլուխների ծանրակշիռ գիտական արժեքի ապահովման գործում զգալի դեր ունեն նաև Գրիգոր Մագիստրոսի «Մեկնութիւն քերականին» երկի և նամակների բնագրերից առատորեն քաղված ծավալուն մեջբերումները՝ ռուսերեն թարգմանությամբ (հայերեն գրաբարյան բնագրերը տրված են տողատակում), որը մի

շարք դեպքերում Ա. Արևշատյանի կողմից ենթակվել է կարևոր ճշգրտումների, ուղղումների և լրացումների: Դրանց գերակշռող մասն առաջին անգամ է գիտական շրջանառության մեջ դրվում ռուսերեն թարգմանությամբ: Տվյալ թարգմանությունների նշանակությունն է՝ ավելի է ընդգծում այն փաստը, որ Մագիստրոսի «Թղթերը» բնորոշվում են շարադրման խրթին ոճով, հունաբանություններով, դժվար վերծանելի դարձվածքներով, երբեմն՝ վերծանման չենթարկվող բառերով:

Գիրքը համալրված է նոտային օրինակներով, Գրիգոր Մագիստրոսի պայմանական դիմանկարը պատկերող եզակի մանրանկարով, Անիի Մայր տաճարի և Գրիգոր Մագիստրոսի կառուցած եկեղեցիների լուսանկարներով: Աշխատության վերջում բերված են հայերեն և անգլերեն ամփոփումները:

Գրիգոր Մագիստրոս Պաիվալունու բազմաբևեռ և բեղուն գործունեությունը հայ միջնադարյան գիտական ու մշակութային կյանքի բարձրագույն ծաղկման առավել լիարժեք մարմնավորումներից է: Միևնույն ժամանակ, Գրիգոր Մագիստրոսի կերպարը և նրա ժառանգությունը կարևորվում են նաև շատ ավելի լայն համատեքստում՝ համադրվելով, մասնավորաբար, տվյալ ժամանակաշրջանի այլազգի երևելի մտավորականների հետ: Ականավոր հայ գործչի գնահատման հենց այս չափանիշներով է առաջնորդվել Ա. Արևշատյանը գրախոսվող մենագրության մեջ, որն իր շահեկան լրացումներով հանդերձ ևս մեկ կարևոր հանգրվան է նշանավորում Գրիգոր Մագիստրոսի ժառանգության ուսումնասիրության ասպարեզում: Մենագրության ռուսալեզու լինելու հանգամանքն, անկասկած, մատչելի կդարձնի այս մեծարժեք ուսումնասիրությունը նաև միջազգային գիտական լայն հանրությանը, ինչը խիստ կարևոր է արդի հայ միջնադարագիտության նվաճումները միջազգային գիտական ասպարեզում ներկայացնելու և գիտական երկխոսությունը խթանելու տեսանկյունից:

Գայանե ԱՄԻՐԱՂՅԱՆ

արվեստագիտության թեկնածու,

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող